Կ-**385**$^{4}$-04.10.2022-ՏՏԳՇ-011/0

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ~~ԼՐԱՑՈՒՄ~~ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**~~ՀՈԴՎԱԾ~~Հոդված 1.** «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-135-Ն 2-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ «**~~գենետիկորեն ձևափոխված (գենաինժեներային, տրանսգեն) օրգանիզմներ~~** ~~օրգանիզմ կամ օրգանիզմներ, ցանկացած ոչ բջջային, բջջային (միաբջիջ կամ բազմաբջիջ) կազմավորում, որոնք ընդունակ են վերարտադրվելու կամ ժառանգական գենետիկական նյութ փոխանցելու, տարբեր են բնական օրգանիզմներից, ստացված են գենետիկական ինժեներիայի մեթոդների կիրառմամբ, և/կամ պարունակում են գենաինժեներային նյութ, այդ թվում գեներ, դրանց առանձին հատվածներ կամ գեների համակցություններ~~ **գենետիկորեն ձևափոխված (գենետիկ ինժեներիայի եղանակով ստացված, տրանսգենային) օրգանիզմներ ~~(այսուհետ՝ ԳՁՕ)~~**՝ օրգանիզմ կամ մի քանի օրգանիզմներ, ցանկացած ոչ բջջային, միաբջիջ կամ բազմաբջիջ գոյացություն, որոնք ունակ են վերարտադրելու կամ փոխանցելու ժառանգական գենետիկ նյութը, որոնք տարբերվում են գենետիկ ինժեներիայի

մեթոդների կիրառմամբ ստացված բնական օրգանիզմներից և (կամ) պարունակում են գենետիկ ինժեներիայի նյութ՝ ներառյալ գեները, դրանց հատվածները կամ գեների համակցությունները::»:

**ՀՈԴՎԱԾՀոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:**